

ԽՈՐՀՐԴԻ 1985 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 3821/85 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՏՀ)

Ավտոտրանսպորտային միջոցներում ձայնագրող սարքավորումների մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ, մասնավորապես, դրա 75-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը (2),

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

քանի որ թիվ 2828/77 (5) կանոնակարգով (ԵՏՀ) վերջին անգամ փոփոխված թիվ 1463/70 (4) կանոնակարգով (ԵՏՀ) ներդրվել են ավտոտրանսպորտային միջոցներում ձայնագրող սարքավորումները,

քանի որ, հաշվի առնելով այսուհետ սահմանվող փոփոխությունները, հարցերը հստակեցնելու նպատակով՝ համապատասխան բոլոր դրույթները պետք է միավորվեն մեկ ընդհանուր տեքստում, որի հետեւանքով Խորհրդի թիվ 1463/70 կանոնակարգը (ԵՏՀ) պետք է ուժը կորցրած ճանաչվի,

քանի որ, այնուամենայնիվ, ուղեորափոխադրումների հետ կապված որոշ ծառայությունների դեպքում կիրառվող՝ 3(1) հոդվածով սահմանված արտոնությունները պետք է պահպանվեն որոշակի ժամանակահատվածի ընթացքում,

քանի որ այնպիսի ձայնագրող սարքավորումների օգտագործումը, որոնք կարող են ցույց տալ «Ավտոճանապարհային տրանսպորտին վերաբերող որոշ սոցիալական օրենսդրության ներդաշնակեցման մասին» թիվ 3820/85 կանոնակարգում (ԵՏՀ) (6) նշված ժամանակահատվածները, նախատեսված է այդ սոցիալական օրենսդրության արդյունավետ ստուգումն ապահովելու համար,

քանի որ նման ձայնագրող սարքավորումների օգտագործման պարտավորությունը կարող է կիրառվել միայն անդամ պետություններում գրանցված փոխադրամիջոցների նկատմամբ. քանի որ, բացի դրանից, նման փոխադրամիջոցների որոշ տեսակներ կարող են, առանց դժվարություն առաջացնելու, դուրս մնալ սույն Կանոնակարգի գործողության ոլորտից,

քանի որ անդամ պետությունները, Հանձնաժողովի թույլտվությամբ, պետք է իրավունք ունենան, բացառիկ հանգամանքներում, որոշ փոխադրամիջոցների դեպքում արտոնություններ տրամադրելու Կանոնակարգի դրույթների կիրառության առումով. քանի որ հրատապ դեպքերում, պետք է առանց

Հանձնաժողովի կողմից նախնական թույլտվություն ստանալու, հնարավոր լինի սահմանափակ ժամկետով այդպիսի արտոնությունների տրամադրումը,

քանի որ արդյունավետ ստուգումն ապահովելու համար սարքավորումները պետք է հուսալի լինեն՝ շահագործման առումով, դյուրին՝ օգտագործման մեջ եւ նախագծված լինեն այնպես, որ դրանք ապօրինաբար օգտագործելու բոլոր հնարավորությունները նվազագույնի հասցվեն,

քանի որ փոխադրամիջոցի կատարած ճամփորդության այլ մանրամասների, ինչպես, օրինակ՝ արագության կամ անցած հեռավորության ավտոմատ գրանցումը զգալիորեն կնպաստի ավտոճանապարհային անվտանգության ապահովմանը եւ կխթանի փոխադրամիջոցը խելամիտ կերպով վարելը. քանի որ, հետեւաբար, նպատակահարմար է, որ սարքավորումների համար նախատեսված լինի նաեւ նման մանրամասներ գրանցելու հնարավորություն,

քանի որ անհրաժեշտ է սահմանել Համայնքի՝ կառուցվածքի եւ տեղադրման ստանդարտներ ձայնագրող սարքավորումների համար եւ նախատեսել ԵՏՀ-ի կողմից հաստատման ընթացակարգ՝ անդամ պետությունների ամբողջ տարածքում նման ձայնագրող սարքավորումներով հագեցած փոխադրամիջոցների գրանցման, ինչպես նաեւ դրանց շահագործման կամ օգտագործվող նման սարքավորումների հետ կապված խոչընդոտներից խուսափելու նպատակով,

քանի որ ԵՏՀ-ի՝ տեսակի հաստատման վերաբերյալ անդամ պետությունների միջեւ տեսակետների տարբերությունների առկայության դեպքում Հանձնաժողովը պետք է իրավասու լինի վեց ամսվա ընթացքում որոշում կայացնելու վեճի վերաբերյալ, եթե տվյալ պետությունները չեն կարողացել համաձայնության գալ տվյալ հարցի շուրջ,

քանի որ սույն Կանոնակարգն իրականացնելիս եւ չարաշահումները կանխելիս՝ օգտակար կլինի վարորդներին, նրանց կողմից պահանջի դեպքում, տրամադրել իրենց գրանցման թերթիկների պատճենները,

քանի որ աշխատանքի եւ հանգստի ժամանակահատվածների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է, որ գործատուները եւ վարորդները պատասխանատու լինեն՝ հետեւելու սարքավորումների ճշգրիտ աշխատանքին եւ ինչպես նաեւ իրենց կողմից՝ սահմանված գործողություններն անհրաժեշտ զգուշությամբ կատարելուն,

քանի որ ճկուն գրաֆիկով աշխատանքային շաբաթը հաստատուն գրաֆիկով շաբաթով փոխարինելուց հետո պետք է փոփոխվեն այն դրույթները, որոնք կարգավորում են գրանցման թերթիկները թիվը, որոնք վարորդն իր հետ պետք է ունենա,

քանի որ տեխնիկական առաջընթացով պայմանավորված՝ կարող է անհրաժեշտություն առաջանալ արագ կերպով համապատասխանեցնելու սույն Կանոնակարգի հավելվածներում սահմանված տեխնիկական մասնագրերը. քանի որ այս նպատակին ուղղված անհրաժեշտ միջոցառումների իրականացմանը նպաստելու համար պետք է դրույթ սահմանել՝ Խորհրդատվական կոմիտեի

շրջանակներում անդամ պետությունների եւ Հանձնաժողովի միջեւ սերտ համագործակցություն հաստատելու ընթացակարգի համար,

քանի որ անդամ պետությունները պետք է փոխանակեն սահմանված խախտումների մասին առկա տեղեկությունները,

եւ քանի որ ձայնագրող սարքավորումների հուսալի եւ ճշգրիտ աշխատանքն ապահովելու համար խորհուրդ է տրվում միասնական պահանջներ սահմանել պարբերաբար կատարվող ստուգումների եւ զննումների համար, որոնց սարքավորումները պետք է ենթարկվեն տեղադրվելուց հետո,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

ԳԼՈՒԽ I

Սկզբունքները եւ գործողության ոլորտը

Հոդված 1

Սույն Կանոնակարգի իմաստով՝ ձայնագրող սարքավորումները՝ դրանց կառուցվածքի, տեղադրման, օգտագործման եւ փորձարկման առումներով համապատասխանում են սույն Կանոնակարգի ու դրա I եւ II հավելվածների պահանջներին, որոնք կազմում են սույն Կանոնակարգի անբաժանելի մասը:

Հոդված 2

Սույն Կանոնակարգի նպատակներով՝ կիրառվում են թիվ 3820/85 կանոնակարգի (ԵՏՀ) 1-ին հոդվածում նշված սահմանումները:

Հոդված 3

1. Ձայնագրող սարքավորումները տեղադրվում եւ օգտագործվում են անդամ պետություններում գրանցված այն փոխադրամիջոցների մեջ, որոնք օգտագործվում են ուղեւորների կամ բեռների ավտոճանապարհային փոխադրման համար՝ բացառությամբ թիվ 3820/85 կանոնակարգի (ԵՏՀ) 4-րդ հոդվածում եւ 14 (1) հոդվածում նշված փոխադրամիջոցների:

2. Անդամ պետությունները կարող են տրամադրել թիվ 3820/85 կանոնակարգի (ԵՏՀ) 13 (1) հոդվածում նշված փոխադրամիջոցների նկատմամբ սույն Կանոնակարգը չկիրառելու

արտոնություն: Անդամ պետությունները տեղեկացնում են Հանձնաժողովին այս պարբերության համաձայն որեւէ արտոնություն շնորհելու մասին:

3. Հանձնաժողովի կողմից թույլտվություն ստանալուց հետո անդամ պետությունները կարող են, թիվ 3820/85 կանոնակարգի (ԵՏՀ) հոդված13 (2)–ում նշված փոխադրման գործողությունների համար օգտագործվող փոխադրամիջոցների նկատմամբ չկիրառել սույն Կանոնակարգը: Հրատապ դեպքերում, նրանք կարող են 30 օրը չգերազանցող ժամանակահատվածով կիրառել ժամանակավոր արտոնություն, ինչի մասին անհապաղ ծանուցվում է Հանձնաժողովին: Հանձնաժողովը մյուս անդամ պետություններին ծանուցում է սույն պարբերության համաձայն շնորհված ցանկացած արտոնության մասին:

4. Ազգային փոխադրումների գործողությունների դեպքում անդամ պետությունները կարող են պահանջել ձայնագրող սարքավորումների տեղադրումը եւ օգտագործումը՝ սույն Կանոնակարգի համաձայն բոլոր այն փոխադրամիջոցներում, որոնց համար, 1–ին պարբերության համաձայն, չի պահանջվում դրանց տեղադրումը եւ օգտագործումը:

ԳԼՈՒԽ II

Տեսակի հաստատումը

Հոդված 4

Ձայնագրող սարքավորումների տեսակի կամ գրանցման թերթիկի նմուշի՝ ԵՏՀ հաստատման համար դիմումները ներկայացվում են արտադրողի կամ անդամ պետությունում նրա գործակալի կողմից՝ կից ներկայացնելով համապատասխան մասնագրերը:

Ձայնագրող սարքավորման որեւէ տեսակի կամ գրանցման թերթիկի որեւէ նմուշի հետ կապված ոչ մի դիմում չի կարող ներկայացվել մեկ անդամ պետությունից ավելի պետություն:

Հոդված 5

Անդամ պետությունը տրամադրում է ԵՏՀ հաստատումը ձայնագրող սարքավորումների յուրաքանչյուր տեսակի կամ գրանցման թերթիկի յուրաքանչյուր նմուշի համար, որը համապատասխանում է սույն Կանոնակարգի հավելվածում սահմանված պահանջներին՝ պայմանով, որ անդամ պետությունը հնարավորություն ունենա ստուգելու արտադրական նմուշների համապատասխանությունը հաստատված նախատիպին:

Հաստատված նմուշի որեւէ փոփոխության կամ լրացման համար պետք է ստանալ ԵՏՀ տեսակի հաստատում այն անդամ պետությունից, որը տրամադրել է սկզբնական ԵՏՀ տեսակի հաստատումը:

Հոդված 6

Անդամ պետությունները դիմումը ներկայացնողին են տրամադրում ԵՏՀ հաստատման նշանը, որը համապատասխանում է II հավելվածում ցույց տրված նմուշին՝ ձայնագրող սարքավորումների յուրաքանչյուր տեսակի կամ գրանցման թերթիկի նմուշի համար, որը նրանք հաստատում են 5-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 7

Անդամ պետությունների այն իրավասու մարմինները, որոնց ներկայացվել է տեսակի հաստատման դիմումը, իրենց կողմից հաստատված կամ մերժված ձայնագրող սարքավորումների յուրաքանչյուր տեսակի կամ գրանցման թերթիկի նմուշի համար կամ՝ մեկ ամսվա ընթացքում մյուս անդամ պետությունների մարմիններ են ուղարկում են հաստատման հավաստագրի պատճենը՝ կից ներկայացնելով համապատասխան մասնագրերը, կամ, հանգամանքներից ելնելով, այդ մարմիններին տեղեկացնում են, որ այդ հաստատումը մերժվել է. մերժման դեպքերում նրանք տեղեկացնում են իրենց որոշման հիմքերի մասին:

Հոդված 8

1. Եթե անդամ պետությունը, որը 5-րդ հոդվածով նախատեսվածի համաձայն տրամադրել է ԵՏՀ տեսակի հաստատումը, կարծում է, որ իր կողմից տրամադրված ԵՏՀ տեսակի հաստատման նշանը կրող որոշ ձայնագրող սարքավորումներ կամ գրանցման թերթիկներ չեն համապատասխանում իր կողմից հաստատված նախատիպին, ապա այն ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ արտադրական նմուշները համապատասխանեն հաստատված նախատիպին: Ձեռնարկվող միջոցները կարող են, անհրաժեշտության դեպքում, ներառել անգամ ԵՏՀ տեսակի հաստատումն ետ վերցնելը հաստատման հետ վերցնելը:

2. Այն անդամ պետությունը, որը տրամադրել է ԵՏՀ տեսակի հաստատումը, հետ է վերցնում նման հաստատումը, եթե հաստատված ձայնագրող սարքավորումը կամ գրանցման թերթիկը չի համապատասխանում սույն Կանոնակարգին կամ դրա հավելվածներին, կամ, որի օգտագործման ընթացքում ի հայտ է գալիս ընդհանուր բնույթի որեւէ թերություն, ինչի պատճառով այն դառնում է նախատեսված նպատակին ծառայելու համար ոչ պիտանի:

3. Եթե անդամ պետությունը, որը տրամադրել է ԵՏՀ տեսակի հաստատումը, 1-ին եւ 2-րդ պարբերություններում նշված դեպքերի մասին տեղեկացվում է մեկ այլ անդամ պետության կողմից, այն նաեւ, այդ նույն անդամ պետության հետ խորհրդակցելուց հետո, 5-րդ պարբերության համաձայն, ձեռնարկում է այդ պարբերություններում սահմանված քայլերը:

4. Այն անդամ պետությունը, որը համոզվում է, որ ստեղծվել է 2-րդ պարբերությունում նշված իրավիճակներից որեւէ մեկը, կարող է արգելել, ընդհուպ մինչեւ դրա մասին հետագա ծանուցում ուղարկելը, ձայնագրող սարքավորումների կամ գրանցման թերթիկների շուկայահանումը եւ շահագործումը: Նույնը կիրառվում է այն ձայնագրող սարքավորումների եւ գրանցման թերթիկների վերաբերյալ 1-ին պարբերությունում նշված դեպքերի համար, որոնք ազատված են եղել ԵՏՀ նախնական ստուգումից, եթե արտադրողը, պատշաճ զգուշացումից հետո, չի ապահովում տվյալ սարքավորման համապատասխանությունը հաստատված նմուշի կամ սույն Կանոնակարգի պահանջների հետ: Անդամ պետությունների իրավասու մարմիններն ամեն դեպքում միմյանց եւ Հանձնաժողովին, մեկ ամսվա ընթացքում, տեղեկացնում են ԵՏՀ տեսակի հաստատման հետ վերցնելու որեւէ դեպքի կամ 1-ին, 2-րդ եւ 3-րդ պարբերությունների համաձայն ձեռնարկված այլ միջոցների մասին եւ նշում են նման գործողություններ ձեռնարկելու հիմքերը:

5. Եթե այն անդամ պետությունը, որը տրամադրել է ԵՏՀ տեսակի հաստատումը, վիճարկում է 1-ին, 2-րդ պարբերություններում նշված դեպքերից որեւէ մեկի գոյությունը, որի մասին ծանուցվել է նրան, համապատասխան անդամ պետությունները փորձում են կարգավորել վեճը, եւ Հանձնաժողովը տեղեկացվում է այդ ամենի մասին:

Եթե վերոնշյալ 3-րդ պարբերությունում նշված ծանուցման ամսաթվից հետո չորս ամսվա ընթացքում անդամ պետությունների միջեւ ընթացող բանակցությունները չեն հանգեցրել համաձայնության, Հանձնաժողովը, բոլոր անդամ պետությունների փորձագետների հետ խորհրդակցելուց հետո եւ հաշվի առնելով բոլոր համապատասխան, օրինակ՝ տնտեսական եւ տեխնիկական գործոնները, վեց ամսվա ընթացքում ընդունում է որոշում, որի մասին տեղեկացվում է համապատասխան անդամ պետություններին եւ, միեւնույն ժամանակ, մյուս անդամ պետություններին: Հանձնաժողովը յուրաքանչյուր դեպքի համար ժամկետներ է սահմանում՝ իր որոշումը կատարելու համար:

Հոդված 9

1. Նմուշային գրանցման թերթիկի ԵՏՀ տեսակի հաստատման դիմում ներկայացնողն իր դիմումում նշում է ձայնագրող սարքավորումների այն տեսակը կամ տեսակները, որոնց վրա նախատեսված է նշված թերթիկի օգտագործումը եւ թերթիկի փորձարկման նպատակով տրամադրում է նման տեսակի կամ տեսակների համապատասխան սարքավորումները:

2. Յուրաքանչյուր անդամ պետության իրավասու մարմինները նմուշային գրանցման թերթիկի հաստատման հավաստագրում նշում են ձայնագրող սարքավորումների այն տեսակը կամ տեսակները, որոնց վրա կարող է օգտագործվել այդ նմուշային թերթիկը:

Հոդված 10

Ոչ մի անդամ պետություն չի կարող մերժել ձայնագրող սարքավորումներով հագեցած որեւէ փոխադրամիջոցի գրանցումը կամ արգելել նման փոխադրամիջոցի շահագործումը կամ օգտագործումը որեւէ պատճառով՝ կապված այն փաստի հետ, որ փոխադրամիջոցը հագեցած է նման սարքավորումներով, եթե սարքավորումը կրում է 6-րդ հոդվածում նշված ԵՏՀ հաստատման նշանը եւ 12-րդ հոդվածում նշված՝ տեղադրման մասին ցուցանակը:

Հոդված 11

Սույն Կանոնակարգի համաձայն՝ բոլոր այն որոշումներում, որոնցով մերժվում կամ ետ է վերցվում ձայնագրող սարքավորումների տեսակի կամ գրանցման թերթիկի նմուշի հաստատումը, մանրամասնորեն նշվում են այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել դրանց կայացման համար: Որոշման մասին պետք է տեղեկացվի համապատասխան կողմին, որը, միեւնույն ժամանակ, պետք է տեղեկացվի իրեն հասանելի՝ անդամ պետությունների օրենքներով նախատեսված իրավական պաշտպանության եւ նման իրավական պաշտպանությունից օգտվելու ժամկետների մասին:

ԳԼՈՒԽ III

Տեղադրում եւ զննում

Հոդված 12

1. Ձայնագրող սարքավորումները կարող են տեղադրվել կամ վերանորոգվել միայն անդամ պետությունների իրավասու մարմինների կողմից այդ նպատակով հաստատված տեղադրող մասնագետների կամ արհեստանոցների կողմից, երբ տվյալ մարմինները, իրենց կողմից նման ցանկության դեպքում, լսել են համապատասխան արտադրողների կարծիքները:

2. Հաստատված տեղադրող մասնագետը կամ արհեստանոցը հատուկ նշան է դնում իր կողմից դրված կապարակնիքների վրա: Անդամ պետությունների իրավասու մարմինները վարում են օգտագործված նշանների գրանցամատյան:

3. Անդամ պետությունների իրավասու մարմինները միմյանց են ուղարկում իրենց կողմից հաստատված տեղադրող մասնագետների կամ արհեստանոցների ցանկերը, ինչպես նաև օգտագործված նշանների պատճենները:

4. Ձայնագրող սարքավորումների՝ սույն Կանոնակարգի պահանջների համաձայն տեղադրումը հավաստելու նպատակով օգտագործվում է I հավելվածի համաձայն ամրացված տեղադրման մասին ցուցանակը:

ԳԼՈՒԽ IV

Սարքավորումների օգտագործումը

Հոդված 13

Գործատուն եւ վարորդները պատասխանատու են սարքավորումների ճշգրիտ աշխատանքին հետեւելու համար:

Հոդված 14

1. Գործատուն պետք է վարորդներին տրամադրի բավարար թվով գրանցման թերթիկներ՝ հաշվի առնելով, որ այդ թերթիկները տրամադրվում են անհատական սկզբունքով, ինչպես նաև դրանց գործածության ժամկետը եւ վնասված կամ լիազորված տեսուչի կողմից վերցված թերթիկները փոխարինելու հնարավոր պարտավորությունը:

Գործատուն պետք է վարորդներին տրամադրի միայն հաստատված նմուշի թերթիկներ, որոնք հարմար են փոխադրամիջոցի մեջ տեղադրված սարքավորումներում օգտագործելու համար:

2. Ընկերությունը գրանցման թերթիկները, դրանց օգտագործումից հետո առնվազն մեկ տարվա ընթացքում, պահպանում է սարքին վիճակում եւ նրանց կողմից պահանջի դեպքում դրանց պատճենները տրամադրում է համապատասխան վարորդներին: Թերթիկները տրամադրվում կամ հանձնվում են ցանկացած լիազորված տեսուչի՝ նրա կողմից պահանջի դեպքում:

Հոդված 15

1. Վարորդները չեն օգտագործում կեղտոտ կամ վնասված գրանցման թերթիկները: Թերթիկներն այս առումով պետք է ինչպես հարկն է պաշտպանված լինեն:

Գրանցումներ պարունակող թերթիկի վնասվելու դեպքում վարորդները վնասված թերթիկը կցում են այն փոխարինելու նպատակով օգտագործված պահեստային թերթիկին:

2. Վարորդները գրանցման թերթիկներն օգտագործում են յուրաքանչյուր օր, երբ նրանք վարում են փոխադրամիջոցը՝ սկսած այն պահից, երբ նրանք հանձն են առնում փոխադրամիջոցը վարելու պարտավորությունը: Գրանցման թերթիկը չի կարող հետ վերցվել մինչև օրական աշխատանքային ժամանակահատվածի ավարտը, եթե դրա հետ վերցնելը այլ կերպ թույլատրված չէ: Ոչ մի գրանցման թերթիկ չի կարող օգտագործվել՝ ընդգրկելու համար ավելի երկար ժամանակահատված, քան այն, որի համար այն նախատեսված է: Երբ, փոխադրամիջոցից հեռու լինելու հետեանքով վարորդը չի կարող օգտագործել փոխադրամիջոցի մեջ տեղադրված սարքավորումը, ստորել՝ 3-րդ պարբերության երկրորդ պարբերության «բ», «գ» եւ «դ»-ում նշված ժամանակահատվածները մուտքագրվում են թերթիկի վրա ձեռքով, կամ ավտոմատ գրանցմամբ կամ որեւէ այլ կերպ՝ հստակ ընթեռնելի ձեւով եւ առանց թերթիկը կեղտոտելու:

Վարորդները, անհրաժեշտության դեպքում, փոխում են գրանցման թերթիկները փոխադրամիջոցում մեկից ավելի վարորդի առկայության դեպքում, այնպես, որ I հավելվածի II գլխի (1)–(3)–ում նշված տեղեկությունները գրանցվեն փոխադրամիջոցը փաստացի վարող վարորդի գրանցման թերթիկի վրա:

3. Վարորդները պետք է.

– ապահովեն, որ թերթիկի վրա գրանցված ժամանակը համապատասխանի փոխադրամիջոցի գրանցման երկրի պաշտոնական ժամանակի հետ,

– գործի դնեն փոխարկման մեխանիզմները՝ հնարավոր դարձնելով հետեւյալ ժամանակահատվածների առանձին եւ հստակ գրանցումը.

ա) նշանի տակ՝ վարելու ժամանակը,

բ) նշանի տակ՝ մյուս բոլոր աշխատանքային ժամանակահատվածները,

գ) նշանի տակ՝ մատչելիության այլ ժամանակահատվածները, որոնք են՝

– սպասելու ժամանակը, այսինքն՝ այն ժամանակահատվածը, որի ընթացքում վարորդները պետք է մնան իրենց տեղերում՝ միայն զանգերին պատասխանելու համար, համաձայն որոնց նրանք պետք է սկսեն կամ վերսկսեն վարելը կամ այլ աշխատանք կատարեն,

– վարորդի կողքին անցկացրած ժամանակը, երբ մեքենան ընթացքի մեջ է,

– ննջախցում անցկացրած ժամանակը, երբ մեքենան ընթացքի մեջ է,

դ) նշանի տակ՝ աշխատանքային ընդմիջումները եւ ամենօրյա հանգստի ժամանակահատվածները:

4. Յուրաքանչյուր անդամ պետություն կարող է թույլատրել 3-րդ պարբերության երկրորդ պարբերության «բ», «գ»-ում նշված բոլոր ժամանակահատվածների մասին իր տարածքում գրանցված փոխադրամիջոցների վրա օգտագործվող գրանցման թերթիկների վրա կատարել գրառումներ՝ համապատասխան նշանի տակ:

5. Անձնակազմի յուրաքանչյուր անդամ իր գրանցման թերթիկի վրա լրացնում է հետևյալ տեղեկությունները.

ա) թերթիկի օգտագործումը սկսելիս՝ իր ազգանունը եւ անունը,

բ) թերթիկի օգտագործումը սկսելու ամսաթիվն ու վայրը եւ օգտագործման ավարտի ամսաթիվն ու վայրը,

գ) իրեն տրամադրված յուրաքանչյուր փոխադրամիջոցի գրանցման համարը՝ գրանցելով այն թերթիկի վրա առաջին ուղեւորության սկզբին եւ, այնուհետեւ, փոխադրամիջոցի փոփոխման դեպքում, թերթիկի օգտագործման ընթացքում,

դ) վազքաչափի ցուցմունքը.

- թերթիկի վրա գրանցված առաջին ուղեւորության սկզբին,

- թերթիկի վրա գրանցված վերջին ուղեւորության վերջում,

- աշխատանքային օրվա ընթացքում մեքենայի փոփոխության դեպքում (իրեն տրամադրված փոխադրամիջոցի ցուցմունքը եւ իրեն տրամադրվելիք փոխադրամիջոցի ցուցմունքը),

ե) փոխադրամիջոցի ցանկացած փոփոխության ժամանակը:

6. Սարքավորումները նախագծվում են այնպես, որ լիազորված տեսուչը, անհրաժեշտության դեպքում, սարքավորումը բացելուց հետո հնարավորություն ունենա կարդալու ստուգմանը նախորդող ինը ժամվա ընթացքում կատարված գրառումները՝ առանց մեկընդմիջտ ձեւափոխելու, վնասելու կամ կեղտոտելու թերթիկը:

Բացի դրանից՝ սարքավորումները նախագծվում են այնպես, որ հնարավորություն տան, առանց տուփը բացելու, ստուգելու, որ գրանցումներն իսկապես կատարվում են:

7. Լիազորված տեսուչի կողմից պահանջի դեպքում վարորդը պետք է կարողանա ցույց տալ ընթացիկ շաբաթվա եւ, ամեն դեպքում, նախորդ շաբաթվա վերջին օրվա գրանցման թերթիկները, երբ նա վարել է փոխադրամիջոցը:

Հոդված 16

1. Սարքավորման անսարքության կամ խափանումներով աշխատանքի դեպքում գործատուն պետք է, առաջին իսկ հնարավորության դեպքում, ապահովի դրա վերանորոգումը հաստատված տեղադրող մասնագետի կամ արհեստանոցի կողմից:

Եթե անսարքության կամ թերություններով աշխատանքի հայտնաբերման օրվանից հաշված մեկ շաբաթվա ընթացքում չի հաջողվում փոխադրամիջոցը վերադարձնել տարածք, վերանորոգումը կատարվում է ճանապարհին:

19-րդ հոդվածի համաձայն՝ անդամ պետությունների կողմից ձեռնարկված միջոցները կարող են իրավասու մարմիններին իրավունք տալ՝ արգելելու փոխադրամիջոցի օգտագործումն այն դեպքերում, երբ անսարքությունը չի ուղղվել կամ խափանումներով աշխատանքը չի կարգավորվել վերը նշված ենթապարբերությունների համաձայն:

2. Երբ սարքավորումը շահագործման համար պիտանի չէ կամ աշխատում է թերություններով, վարորդները գրանցման թերթիկի կամ թերթիկների, կամ գրանցման թերթիկին կցվող ժամանակավոր թերթիկի վրա նշում են տարբեր ժամանակահատվածների վերաբերյալ այն բոլոր տեղեկությունները, որոնք ճշգրտորեն չեն գրանցվել սարքի կողմից:

ԳԼՈՒԽ V

Եզրափակիչ դրույթներ

Հոդված 17

Հավելվածները տեխնիկական առաջընթացին հարմարեցնելու համար անհրաժեշտ փոփոխություններն ընդունվում են 18-րդ հոդվածում սահմանված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 18

1. Սույնով ստեղծվում է սույն Կանոնակարգը տեխնիկական առաջընթացին հարմարեցնելու հարցերով Կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե). այն բաղկացած է անդամ պետությունների ներկայացուցիչներից, իսկ Հանձնաժողովի ներկայացուցիչը հանդես է գալիս որպես նախագահ:

2. Կոմիտեն ընդունում է իր աշխատանքային կանոնակարգը:

3. Սույն հոդվածում սահմանված ընթացակարգին համապատասխանությունն ապահովելու համար հարցը նախագահի կողմից, իր սեփական նախաձեռնությամբ կամ անդամ պետության ներկայացուցչի պահանջով, ուղարկվում է Կոմիտե:

4. Հանձնաժողովի ներկայացուցիչը Կոմիտե է ներկայացնում ձեռնարկվելիք միջոցառումների նախագիծը: Կոմիտեն տալիս է իր եզրակացությունն այդ նախագծի վերաբերյալ հարցի հրատապությունից ելնելով նախագահի կողմից սահմանված ժամկետի ընթացքում: Եզրակացությունը որոշվում է ձայների որակյալ մեծամասնությամբ՝ Պայմանագրի 148 (2) հոդվածի համաձայն: Նախագահը չի մասնակցում քվեարկությանը:

5. ա) Հանձնաժողովն ընդունում է նախատեսված միջոցառումները, եթե դրանք համապատասխանում են Կոմիտեի եզրակացությանը:

բ) Եթե նախատեսված միջոցառումները չեն համապատասխանում Կոմիտեի եզրակացությանը, կամ եթե եզրակացություն չի ներկայացվում, Հանձնաժողովն անհապաղ Խորհուրդ առաջարկ է ներկայացնում ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ: Խորհուրդը որոշում է կայացնում՝ ձայների որակյալ մեծամասնությամբ:

գ) Եթե Խորհուրդը որոշում չի կայացրել առաջարկն իրեն ներկայացվելուց հետո երեք ամիսների ընթացքում, ապա առաջարկվող միջոցառումներն ընդունվում են Հանձնաժողովի կողմից:

Հոդված 19

1. Անդամ պետությունները ժամանակին եւ Հանձնաժողովի հետ խորհրդակցելուց հետո ընդունում են այնպիսի օրենքներ, կանոնակարգեր կամ վարչական ակտեր, որոնք սույն Կանոնակարգն իրականացնելու համար կարող են անհրաժեշտ լինել:

Այդ ակտերը, մասնավորապես, ներառում են համապատասխանության ստուգման վերակազմակերպման, ընթացակարգի եւ իրականացման միջոցների, ինչպես նաեւ խախտման դեպքում կիրառվող տույժերի մասին դրույթներ:

2. Անդամ պետություններն աջակցում են միմյանց՝ սույն Կանոնակարգի կիրառման եւ դրա հետ համապատասխանությունը ստուգելու հարցում:

3. Այս համատեղ աջակցության շրջանակում անդամ պետությունների իրավասու մարմինները միմյանց պարբերաբար ուղարկում են առկա բոլոր տեղեկությունները հետեւյալի մասին՝

– ոչ ռեզիդենտների կողմից կատարված՝ սույն Կանոնակարգի խախտումները եւ այդ խախտումների համար սահմանված տույժերը,

- անդամ պետության կողմից սահմանված տույժերը իր ռեզիդենտների նկատմամբ, ովքեր այդպիսի խախտումներ են կատարել այլ անդամ պետություններում:

Հոդված 20

Թիվ 1463/70 կանոնակարգը (ԵՏՀ) սույնով ճանաչվում է ուժը կորցրած:

Այնուամենայնիվ, նշված Կանոնակարգի 3 (1) հոդվածը, մինչև 1989 թվականի դեկտեմբերի 31-ը, շարունակում է կիրառվել միջազգային կանոնավոր ուղեւորափոխադրումներ իրականացնող փոխադրամիջոցների եւ վարորդների նկատմամբ, քանի դեռ այդ ծառայությունների համար օգտագործվող փոխադրամիջոցները հագեցած չեն սույն Կանոնակարգում սահմանված կարգով օգտագործվող ձայնագրող սարքավորումներով:

Հոդված 21

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում 1986 թվականի սեպտեմբերի 29-ից:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է եւ բոլոր անդամ պետություններում գործում է անմիջականորեն:

Կատարված է Բրյուսելում, 1985 թվականի դեկտեմբերի 20-ին:

Խորհրդի կողմից

Նախագահ Ռ. ԿՐԻԵՓՍ

1) ՊՏ թիվ C 100, 12.04.1984 թ., էջ 3 եւ ՊՏ թիվ C 223, 03.09.1985 թ., էջ 5:

2) ՊՏ թիվ C 122, 20. 05. 1985թ., էջ 168:

3) ՊՏ թիվ C 104, 25.04.1985 թ., էջ 4 եւ ՊՏ թիվ C 303, 25.11.1985թ., էջ 29:

4) ՊՏ թիվ L 164, 27.07. 1970թ., էջ 1:

5) ՊՏ թիվ L 334, 24. 12. 1977թ., էջ. 11,

6) Տե՛ս սույն Պաշտոնական տեղեկագրի 1-ին էջը:

**ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻՆ, ՓՈՐՁԱՐԿՄԱՆԸ, ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ԵՎ ԶՆՆՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

I. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Սույն հավելվածում՝

ա) «ձայնագրող սարքավորում» նշանակում է

ավտոճանապարհային փոխադրամիջոցներում տեղադրման համար նախատեսված սարքավորում, որն ավտոմատ եւ կիսավտոմատ կերպով ցույց է տալիս եւ գրանցում է այդ փոխադրամիջոցների տեղաշարժման ու դրանց վարորդների աշխատանքային որոշակի ժամերի մանրամասները,

բ) «գրանցման թերթիկ» նշանակում է

գրանցված տվյալներն ընդունելու եւ պահպանելու համար նախատեսված թերթիկ, որը տեղադրվում է ձայնագրող սարքավորման մեջ, եւ որի վրա վերջինիս նշագրման սարքերը կատարում են գրանցման ենթակա տեղեկությունների շարունակական գրանցում,

գ) «ձայնագրող սարքավորման հաստատուն մեծություն» նշանակում է

թվային բնութագիր, որը տալիս է մուտքային ազդանշանի արժեքը, որը պահանջվում է անցած մեկ կիլոմետր հեռավորությունը ցույց տալու եւ գրանցելու համար. այս հաստատուն մեծությունը պետք է արտահայտվի կամ մեկ կիլոմետր վազքի համար պտույտների թվով ($կ = \dots$ պտույտ/կմ), կամ՝ մեկ կիլոմետր վազքի համար իմպուլսների թվով ($կ = \dots$ իմպուլս/կմ),

դ) «տրանսպորտային միջոցի բնութագրական գործակից» նշանակում է

թվային բնութագիր, որը տալիս է ելքային ազդանշանի արժեքը, որն արձակվում է փոխադրամիջոցի այն մասից, որը միացնում է այն ձայնագրող սարքավորմանը (փոխանցման տուփի երկրորդային լիսեռ կամ սոնի), երբ փոխադրամիջոցն անցնում է մեկ փորձարկային կիլոմետր հեռավորություն՝ փորձարկման նորմալ պայմաններում (տե՛ս VI գլուխը, սույն հավելվածի 4-րդ կետը): Բնութագրական գործակիցն արտահայտվում է մեկ կիլոմետր վազքի համար պտույտների թվով ($W =$ պտույտ/կմ) կամ մեկ կիլոմետր վազքի համար իմպուլսների թվով ($W = \dots$ իմպուլս/կմ),

ե) «անվադողերի արդյունավետ շրջանագծի երկարություն» նշանակում է

փոխադրամիջոցը տեղաշարժող մի քանի անիվներով (շարժաբեր անիվներ) անցած հեռավորությունների միջինը մեկ ամբողջական պտույտի ժամանակ: Այդ հեռավորությունների չափումը պետք է կատարվի փորձարկման նորմալ պայմաններում (տե՛ս VI գլուխը, սույն հավելվածի 4-րդ կետը) եւ արտահայտվում է հետեւյալ ձեւով՝ $1 =$ մմ:

II. ԶԱՅՆԱԳՐՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

Սարքավորումը պետք է կարողանա գրանցել հետեւյալը.

1. փոխադրամիջոցի անցած հեռավորությունը,
2. փոխադրամիջոցի արագությունը,
3. վարելու ժամանակը,
4. աշխատանքի եւ մատչելիության մյուս ժամանակահատվածները,
5. աշխատանքի ընդմիջումները եւ օրական հանգստի ժամանակահատվածները,
6. գրանցման թերթիկը պարունակող տուփի բացումը,

Երկու վարորդների կողմից օգտագործվող փոխադրամիջոցների դեպքում սարքավորումը պետք է հնարավորություն ունենա, միաժամանակ, բայց եւ որոշակիորեն ու երկու առանձին թերթիկների վրա գրանցելու 3-րդ, 4-րդ եւ 5-րդ կետերում նշված ժամանակահատվածները:

III. ԶԱՅՆԱԳՐՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

ա) Ընդհանուր կետեր

1. Ձայնագրող սարքավորումները պետք է պարունակեն հետեւյալը.

1.1. Տեսողական չափիչ սարքեր, որոնք ցույց են տալիս՝

- անցած հեռավորությունը (հեռավորությունը գրանցող սարք),
- արագությունը (արագաչափ), - ժամը (ժամացույց):

1.2. Գրանցող սարքեր, որոնք ներառում են. –անցած հեռավորությունը գրանցող սարքը,

–արագաչափը,

– մեկ կամ ավելի ժամանակը գրանցող սարքեր, որոնք բավարարում են III գլխի (գ) 4-ում սահմանված պահանջները:

1.3. Նշագրման սարք, որը գրանցման թերթիկի վրա նշում է կատարում յուրաքանչյուր անգամ, երբ բացվում է այդ թերթիկը պարունակող տուփը:

2. Վերը նշված սարքերում որեւէ այլ լրացուցիչ սարքավորման ներառումը չպետք է խոչընդոտի պարտադիր սարքերի պատշաճ աշխատանքը կամ դրանց ընթերցումը:

Սարքավորումները պետք է ներկայացվեն հաստատման նման լրացուցիչ սարքերի հետ միասին:

3. Նյութերը

3.1. Ձայնագրող սարքավորման բոլոր բաղկացուցիչ մասերը պետք է պատրաստված լինեն բավականաչափ դիմացկուն, մեխանիկական ամրությամբ, էլեկտրական եւ մագնիսական կայուն հատկություններով օժտված նյութերից:

3.2. Սարքավորման բաղկացուցիչ մասերի կամ դրա արտադրության համար օգտագործված նյութերի հատկությունների ցանկացած փոփոխություն պետք է, մինչեւ արտադրության մեջ դրանց կիրառումը, ներկայացվի այն մարմնի հաստատմանը, որը տրամադրել է տվյալ սարքավորման տեսակի հաստատումը:

4. Անցած հեռավորության չափումը

Անցած հեռավորությունները կարող են չափվել կամ գրանցվել.

–այնպես, որ ներառվեն թե՛ առաջընթաց եւ թե՛ հետընթաց շարժումները, կամ

–այնպես, որ ներառվի միայն առաջընթաց շարժումը:

Հետընթաց շարժման որեւէ գրանցում չպետք է, ոչ մի պարագայում, ազդի մյուս գրանցումների հստակության եւ ճշգրտության վրա:

5. Արագության չափում

5.1. Արագության չափման դիապազոնը պետք է լինի տեսակի հաստատման հավաստագրում նշվածին համապատասխան:

5.2. Չափիչ սարքի սեփական հաճախականությունը եւ հանդարտեցումը պետք է լինեն այնպիսին, որ արագությունը ցույց տվող եւ գրանցող սարքերը կարողանան չափման դիապազոնի շրջանակներում հետեւել արագության փոփոխություններին մինչեւ 2 մ/վրկ ² ընդունված թույլատրելի շեղումների սահմաններում:

6. Ժամանակի չափում (ժամացույց)

6.1. Ժամացույցը ելակետային դիրքի բերող մեխանիզմի հսկիչ սարքը պետք է տեղադրվի գրանցման թերթիկը պարունակող տուփի ներսում. յուրաքանչյուր անգամ, երբ բացվում է այդ տուփը, ավտոմատ կերպով նշում է կատարվում գրանցման թերթիկի վրա:

6.2. Եթե գրանցման թերթիկի առաջընթաց շարժման մեխանիզմը վերահսկվում է ժամացույցով, ապա այն ժամանակահատվածը, որի ընթացքում վերջինս ամբողջովին վնասված լինելուց հետո կսկսի ճշգրտորեն աշխատել, պետք է առնվազն 10%-ով ավելի լինի սարքավորման թերթիկների լիցքավորման գրանցումների ժամանակահատվածին համապատասխանող գրանցման ժամանակահատվածից:

7. Լուսավորություն եւ պաշտպանություն

7.1 Սարքավորման տեսողական չափիչ սարքերը պետք է հազեցած լինեն համապատասխան չլացնող լուսավորությամբ:

7.2. Օգտագործման նորմալ պայմաններում սարքավորման բոլոր ներքին դետալները պետք է պաշտպանված լինեն խոնավությունից եւ փոշուց: Բացի դրանից՝ դրանք պետք է միջամտությունից պաշտպանված լինեն փաթեթավորմամբ, որը հնարավոր է կապարակնքել:

բ) Տեսողական չափիչ սարքեր

1. Անցած հեռավորության ցուցիչ (հեռավորությունը գրանցող սարք),

1.1. Անցած հեռավորությունը ցույց տվող սարքի չափման միավորի ամենափոքր արժեքը պետք է լինի 0,1 կիլոմետրը: Հեկտոմետրերը ցույց տվող թվերը պետք է հստակորեն տարբերվեն ամբողջական կիլոմետրերը ցույց տվող թվերից:

1.2. Հեռավորությունը գրանցող սարքի վրա թվերը պետք է հստակորեն ընթեռնելի լինեն եւ ունենան առնվազն 4 մմ ակնհայտ բարձրություն:

1.3. Հեռավորությունը գրանցող սարքը պետք է ունենա մինչեւ առնվազն 99 999,9 կիլոմետր ճանապարհ ցույց տալու հնարավորություն:

2. Արագության ցուցիչներ (արագաչափ)

2.1. Չափման դիապազոնում արագության սանդղակը պետք է միանման աստիճանավորվի՝ ժամում 1, 2, 5 կամ 10 կիլոմետրով: Արագության աստիճանավորման արժեքը (իրար հաջորդող երկու նշանների միջեւ ընկած տարածությունը) չպետք է գերազանցի սանդղակի վրա երեւացող առավելագույն արագության 10%-ը:

2.2. Այդ չափվածից դուրս նշված դիապազոնը կարող է թվերով չնշվել:

2.3. Սանդղակի վրա 10 կմ/ժ արագության տարբերությունը ներկայացնող յուրաքանչյուր տարածության երկարությունը չպետք է 10 միլիմետրից պակաս լինի:

2.4. Սլաքով ցուցիչի վրա սլաքի եւ սարքի ցուցատախտակի միջեւ ընկած հեռավորությունը չպետք է գերազանցի 3 մմ-ը:

3. - Ժամանակի ցուցիչ (ժամացույց)

Ժամանակի ցուցիչը պետք է տեսանելի լինի սարքավորման արտաքին կողմից եւ ցույց տա հստակ, պարզ եւ ոչ երկիմաստ ցուցմունք:

գ) Գրանցող սարքեր

1. Ընդհանուր կետեր

1.1. Բոլոր սարքավորումները, անկախ գրանցման թերթիկի ձեւից (ժապավեն կամ սկավառակ), պետք է ունենան նշան, որը թույլ կտա ճիշտ կերպով տեղադրել գրանցման թերթիկն այնպես, որ ապահովվի ժամացույցի ցույց տված ժամանակի եւ թերթիկի վրա երեւացող ժամանակային նշագրման համապատասխանությունը:

1.2. Գրանցման թերթիկը պետք է ունենա այնպիսի շարժող մեխանիզմ, որն ապահովի գրանցման թերթիկի՝ առանց տատանման շարժումը եւ այն հեշտությամբ տեղադրելու եւ հանելու հնարավորությունը:

1.3. Սկավառակի տեսքով գրանցման թերթիկների դեպքում դեպի առաջ շարժող սարքը պետք է հսկվի ժամացույցի մեխանիզմով: Այս դեպքում թերթիկի պտտեցման շարժումը պետք է լինի շարունակական եւ միատեսակ՝ յոթ մմ/ժամ նվազագույն արագությամբ՝ հաշված արագության գրանցման տարածքի եզրագիծը նշող զանգի ներքին սահմանից:

Ժապավենի համար նախատեսված սարքավորման մեջ, որում թերթիկները դեպի առաջ շարժող սարքը հսկվում է ժամացույցի մեխանիզմով, ուղղաձիգ առաջ շարժման արագությունը պետք է մեկ ժամում լինի առնվազն 10 մմ:

1.4. Անցած հեռավորության, փոխադրամիջոցի արագության եւ գրանցման թերթիկը կամ թերթիկները պարունակող տուփը յուրաքանչյուր անգամ բացելիս գրանցումը պետք է կատարվի ավտոմատ կերպով:

2. Անցած հեռավորության գրանցումը

2.1. Անցած հեռավորության յուրաքանչյուր կիլոմետրը գրանցման մեջ պետք է ներկայացվի՝ համապատասխան կոորդինատի վրա առնվազն մեկ մմ փոփոխությամբ:

2.2. Անգամ այն դեպքում, երբ արագությունները հասնում են չափման դիապազոնի վերին սահմանին, հեռավորությունների գրանցումը պետք է, այնուամենայնիվ, հստակորեն ընթեռնելի լինի:

3. Արագության գրանցումը

3.1. Անկախ գրանցման թերթիկի ձեւից՝ արագությունը գրանցող սայրը պետք է, որպես կանոն, շարժվի ուղիղ գծով եւ աջ անկյուններով՝ գրանցման թերթիկի շարժման ուղղությամբ:

Այնուամենայնիվ, սայրի շարժումը կարող է լինել կորագծային՝ պայմանով, որ բավարարվեն հետեւյալ պայմանները.

- սայրի գծած հետքը պետք է լինի ուղղահայաց՝ արագության գրանցման համար հատկացված տարածքի միջին շրջանագծին (սկավառակի ձեւով թերթիկների դեպքում) կամ առանցքին (ժապավենի ձեւով թերթիկների դեպքում),

- սայրի գծած հետքի կորագծի շառավղի եւ արագության գրանցման համար հատկացված տարածքի միջեւ հարաբերակցությունը պետք է լինի ոչ պակաս, քան 2, 4-ը 1-ի՝ անկախ գրառումների թերթիկի ձեւից,

- ժամանակի սանդղակի վրա նշագրումները պետք է հատեն գրանցման տարածքը միեւնույն շառավիղն ունեցող կորով, ինչ որ սայրի կողմից գծված հետքը: Ժամանակի սանդղակի վրա նշագրումների միջեւ ընկած տարածությունները պետք է ներկայացնեն մեկ ժամը չգերազանցող ժամանակահատված:

3.2. 10 կմ/ժ արագության յուրաքանչյուր փոփոխություն գրանցման մեջ պետք է ներկայացվի համապատասխան կոորդինատի վրա առնվազն 1,5 միլիմետր փոփոխությամբ:

4. Ժամանակի գրանցումը

4.1. Ձայնագրող սարքավորման կառուցվածքը պետք է հնարավորություն տա, անհրաժեշտության դեպքում, փոխարկման սարքի գործի դրմամբ, ավտոմատ կերպով եւ առանձին գրանցելու չորս ժամանակահատվածները՝ Կանոնակարգի 5-րդ հոդվածում նշվածի համաձայն:

4.2. Հետքերի բնութագրերից, դրանց հարաբերական դիրքերից եւ, անհրաժեշտության դեպքում, Կանոնակարգի 15-րդ հոդվածում սահմանված նշաններից ելնելով՝ պետք է հնարավոր լինի հստակորեն միմյանցից տարանջատել տարբեր ժամանակահատվածները:

Տարբեր ժամանակահատվածները գրանցման մեջ պետք է իրարից տարբերակվեն համապատասխան հետքերի հաստությամբ կամ ցանկացած այլ համակարգով, որը կունենա առնվազն նույն արդյունավետությունը՝ գրանցման ընթեռնելիության եւ դյուրին մեկնաբանման առումներով:

4.3. Մեկից ավելի վարորդներից բաղկացած փոխադրամիջոցների անձնակազմի դեպքում 4.1 կետով նախատեսված գրանցումները պետք է կատարվեն առանձին թերթիկների վրա՝ յուրաքանչյուր թերթիկը հատկացնելով մեկ վարորդի: Այս դեպքում առանձին թերթիկների դեպի առաջ շարժումը պետք է կատարվի մեկ մեխանիզմի կամ առանձին սինխրոնիզացված մեխանիզմների միջոցով:

դ) Փակող սարք

1. Գրանցման թերթիկը կամ թերթիկները եւ ժամացույցը ելակետային դիրքի բերելու մեխանիզմի հսկիչ սարքը պարունակող տուփը պետք է ապահովված լինի փականքով:

2. Յուրաքանչյուր անգամ, երբ բացվում է գրանցման թերթիկը կամ թերթիկները եւ ժամացույցը ելակետային դիրքի բերելու մեխանիզմի հսկիչ սարքը պարունակող տուփը, պետք է ավտոմատ կերպով նշում կատարվի գրանցման թերթիկում կամ թերթիկներում:

ե) Նշագրումներ

1. Սարքավորման ցուցատախտակի վրա պետք է հայտնվեն հետեւյալ նշագրումները.

- հեռավորությունը գրանցող սարքի ցույց տված թվի մոտ՝ հեռավորության չափման միավորը՝ նշված «կմ» հապավումով,

- արագության սանդղակի մոտ՝ «կմ/ժ» նշագրումը,

- արագաչափի չափման դիապազոնը՝ արտահայտված «Վնվազագույն ... կմ/ժ-ով, Վառավելագույն ... կմ/ժ-ով» Այս նշագրումն անհաժեշտ է, եթե այն ցույց է տրված սարքավորման նկարագրական ցուցանակի վրա: Այնուամենայնիվ, այս պահանջները չեն կիրառվում մինչեւ 1970 թվականի օգոստոսի 10-ը հաստատված ձայնագրող սարքավորումների վրա:

2. Նկարագրական ցուցանակը պետք է տեղադրված լինի սարքավորման մեջ եւ ցույց տա հետեւյալ նշագրումները, որոնք պետք է տեսանելի լինեն սարքավորման վրա այն տեղադրելու ժամանակ.

- սարքավորումն արտադրողի անվանումը եւ հասցեն,

- արտադրողի համարը եւ պատրաստման տարեթիվը,

- սարքավորման տեսակի հաստատման նշանը,

- սարքավորման հաստատուն մեծությունը՝ արտահայտված «կ=...պտույտ/կմ-ով», կամ՝ «կ=...իմպուլս/կմ-ով»,

- կամընտիր կերպով՝ արագության չափման դիապազոնը՝ 1-ին կետում նշված ձեւով,

- եթե թեքման անկյան հանդեպ սարքի զգայունությունը կարող է ազդել սարքավորման ցուցմունքների վրա՝ թույլատրելի շեղումներից դուրս, թույլատրելի անկյունն արտահայտվում է հետեւյալ կերպ.

որտեղ α -ն այն անկյունն է, որը չափվել է սարքավորման դիմային վահանակի հորիզոնական դիրքից (ճիշտ ձեւով դեպի վերեւ հարմարեցված), որի համար չափաբերված է սարքը, իսկ ν -ն եւ g -ն ներկայացնում են α չափաբերման անկյունից, համապատասխանաբար, դեպի վերեւ եւ ներքեւ առավելագույն թույլատրելի շեղումները:

զ) Առավելագույն թույլատրելի շեղումները (տեսողական չափիչ եւ գրանցող սարքեր)

1. Փորձարկման վայրում՝ մինչեւ տեղադրումը.

ա) անցած հեռավորությունը՝

իրական հեռավորությունից 1% ավելի կամ պակաս, երբ այդ հեռավորությունն առնվազն 1 կմ է,

բ) արագությունը՝

իրական արագությունից 3 կմ/ժ ավելի կամ պակաս,

գ) ժամանակը՝

± երկու թույլ օրական, յոթ օրվա համար՝ առավելագույնը 10 թույլ այն դեպքերում, երբ ժամացույցի աշխատանքի ժամանակահատվածը այն հետ տալուց հետո կազմում է ոչ պակաս, քան այդ ժամանակահատվածը:

2. Տեղադրման ժամանակ.

ա) անցած հեռավորությունը՝

իրական հեռավորությունից 2 % ավելի կամ պակաս, երբ այդ հեռավորությունն առնվազն 1 կմ է,

բ) արագությունը՝

իրական արագությունից 4 կմ/ժ ավելի կամ պակաս,

գ) ժամանակը՝

± երկու թույլ օրական, կամ

± 10 թույլ՝ յուրաքանչյուր յոթ օրվա համար:

3. Օգտագործման ժամանակ.

ա) անցած հեռավորությունը՝

իրական հեռավորությունից 4 % ավելի կամ պակաս, երբ այդ հեռավորությունն առնվազն 1 կմ է,

բ) արագությունը՝

իրական արագությունից 6 կմ/ժ ավելի կամ պակաս,

գ) ժամանակը՝

± երկու թույլ օրական, կամ

± 10 թույլ՝ յուրաքանչյուր յոթ օրվա համար:

4. 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերում սահմանված առավելագույն թույլատրելի շեղումները գործում են 0 °–ից մինչեւ 40 °C ջերմաստիճանների պայմաններում՝ հիմք ընդունելով միայն սարքավորմանը հարող տարածքներում գրանցվող ջերմաստիճանները:

5. 2-րդ եւ 3-րդ կետերում սահմանված թույլատրելի շեղումների չափումն իրականացվում է IV գլխում սահմանված պահանջների համաձայն:

IV. ԳՐԱՆՑՄԱՆ ԹԵՐԹԻԿՆԵՐ

ա) Ընդհանուր կետեր

1. Գրանցման թերթիկները պետք է լինեն այնպիսին, որ չխոչընդոտեն սարքի նորմալ աշխատանքը, եւ դրանց մեջ պարունակվող գրանցումները լինեն անջնջելի, դյուրընթեռնելի եւ ճանաչելի:

Գրանցման թերթիկները պետք է այնպիսին լինեն, որ պահպանվեն դրանց չափսերը եւ խոնավության ու ջերմաստիճանի նորմալ պայմաններում դրանց վրա կատարված ցանկացած գրանցում:

Բացի դրանից՝ պետք է հնարավոր լինի թերթիկների վրա, առանց դրանք վնասելու եւ կատարված գրանցումների ընթեռնելիության վրա ազդելու, գրառել Կանոնակարգի 15 (5) հոդվածում նշված տեղեկությունները:

Պահպանման նորմալ պայմաններում գրանցումները պետք է հստակորեն ընթեռնելի մնան առնվազն մեկ տարվա ընթացքում:

2. Թերթիկների գրանցման նվազագույն ծավալը պետք է լինի 24 ժամ՝ անկախ դրանց ձեւից:

Եթե շարունակական գրանցումների ծավալը մեծացնելու նպատակով մի քանի սկավառակներ իրար են միացվել, ինչը հնարավոր է ապահովել առանց անձնակազմի միջամտության, ապա տարբեր սկավառակների միջեւ միացումը պետք է կատարվի այնպես, որ մեկ սկավառակից մյուսին փոխանցման կետերում գրանցումների մեջ չլինեն ընդհատումներ կամ համընկնումներ:

բ) Գրանցման տարածքները եւ դրանց աստիճանավորումը

1. Գրանցման թերթիկները պարունակում են հետեւյալ գրանցման տարածքները.

- բացառապես արագության հետ կապված տվյալների համար հատկացված տարածք,
- բացառապես անցած հեռավորության հետ կապված տվյալների համար հատկացված տարածք,
- մեկ կամ ավելի տարածքներ՝ վարելու ժամանակի, աշխատանքի եւ մատչելիության ժամանակահատվածների, աշխատանքային ընդմիջումների եւ վարորդների հանգստի համար նախատեսված ժամանակահատվածների հետ կապված տվյալների համար:

2. Արագությունը գրանցելու համար նախատեսված տարածքի չափը պետք է որոշվի յուրաքանչյուր ժամվա համար 20 կմ կամ ավելի քիչ կազմող բաժինների մասշտաբով: Սանդղակի վրա յուրաքանչյուր նշագրմանը համապատասխանող արագությունը պետք է երեւա տվյալ նշագրման դիմաց նշված թվերով: Այդ տարածքում առնվազն մեկ անգամ պետք է երեւա «Կմ/ժ» խորհրդանշանը: Սանդղակի վրա առկա վերջին նշագրումը պետք է համապատասխանի չափման դիապազոնի վերին սահմանին:

3. Անցած հեռավորությունը գրանցելու համար նախատեսված տարածքը պետք է հատկացվի այնպես, որ անցած բոլոր կիլոմետրերի թիվը հնարավոր լինի ընթերցել առանց որեւէ դժվարության:

4. -1-ին կետում նշված ժամանակահատվածների մասին գրանցումների համար հատկացված տարածքը կամ տարածքները պետք է նշագրվեն այնպես, որ հնարավոր լինի հստակորեն տարանջատել տարբեր ժամանակահատվածները:

գ) Գրանցման թերթիկների վրա տպվելիք տեղեկությունները

Յուրաքանչյուր թերթիկի վրա պետք է տպված լինեն հետեւյալ տեղեկությունները.

- արտադրողի անվանումը եւ հասցեն կամ առետրային անվանումը, - թերթիկի նմուշի հաստատման նշանը,

- սարքավորման այն տեսակի կամ տեսակների հաստատման նշանը, որոնցում կարող է օգտագործվել թերթիկը,

- արագության չափման դիապազոնի վերին սահմանը՝ տպված կմ/ ժ-ով:

Նվազագույն լրացուցիչ պահանջների միջոցով յուրաքանչյուր թերթիկի վրա պետք է տպված լինի ժամանակի սանդղակը, որը պետք է այնպես աստիճանավորված լինի, որ ժամանակը հնարավոր լինի ուղղակիորեն ընթերցել յուրաքանչյուր տասնհինգ րոպեն մեկ, միեւնույն ժամանակ, ապահովելով, որ հինգ րոպե տեւողությամբ ցանկացած ժամանակամիջոց հնարավոր լինի որոշել առանց որեւէ դժվարության:

դ) Ազատ տարածություն՝ ձեռքով կատարվող գրառումների համար

Թերթիկների վրա պետք է ապահովվի ազատ տարածություն այնպես, որ վարորդները հնարավորություն ունենան այնտեղ գրառելու առնվազն հետեւյալ մանրամասները.

- վարորդի ազգանունը եւ անունը,

- թերթիկի օգտագործումն սկսելու ամսաթիվն ու վայրը եւ օգտագործման ավարտի ամսաթիվն ու վայրը,

-այն փոխադրամիջոցի կամ փոխադրամիջոցների գրանցման համարը կամ համարները, որոնք տրամադրվել են վարորդին թերթիկի օգտագործման ընթացքում,

-այն փոխադրամիջոցի կամ փոխադրամիջոցների վազքաչափի ցուցմունքները, որոնք տրամադրվել են վարորդին թերթիկի օգտագործման ընթացքում,

- այն ժամանակը, երբ տեղի է ունենում փոխադրամիջոցի որեւէ փոփոխում:

Վ. ՁԱՅՆԱԳՐՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄԸ

1. Ձայնագրող սարքավորումը փոխադրամիջոցում պետք է տեղադրվի այնպես, որ վարորդին իր նստելատեղից պարզորոշ կերպով տեսանելի լինի արագաչափը, հեռավորությունը գրանցող սարքը եւ ժամացույցը՝ մինչդեռ, միեւնույն ժամանակ, այդ սարքերի բոլոր մասերը՝ շարժաբեր մասերը, պետք է պաշտպանված լինեն պատահաբար վնասվելուց:

2. Պետք է հնարավոր լինի ձայնագրող սարքավորման հաստատուն մեծությունը հարմարեցնել փոխադրամիջոցի բնութագրական գործակցին համապատասխան սարքի միջոցով, որը հայտնի է որպես համակցող սարք (ադապտեր):

Հետեւի կամրջակի երկու կամ ավելի փոխանցման գործակից ունեցող փոխադրամիջոցները պետք է ապահովված լինեն փոխարկման սարքով, որի միջոցով այս տարբեր գործակիցները կարող են ավտոմատ կերպով համապատասխանեցվել այն գործակցին, որի համար սարքավորումը հարմարեցվել է փոխադրամիջոցին:

3. Տեղադրման ժամանակ սարքավորումը ստուգելուց հետո փոխադրամիջոցում՝ սարքավորմանը մոտ կամ անմիջապես սարքավորման մեջ ամրացվում է տեղադրման մասին ցուցանակն այնպես, որ այն պարզորոշ կերպով տեսանելի լինի: Հաստատված տեղադրող մասնագետի կամ արհեստանոցի կողմից յուրաքանչյուր զննումից հետո, որի արդյունքում կպահանջվի կատարել հենց տեղադրման կարգավորման փոփոխություն, նախորդ ցուցանակի ամրացման վայրում պետք է ամրացվի նոր ցուցանակ:

Ցուցանակի վրա պետք է նշված լինեն առնվազն հետեւյալ մանրամասները.

- հաստատված տեղադրող մասնագետի կամ արհեստանոցի անվանումը, հասցեն կամ առետրային անվանումը,
- փոխադրամիջոցի բնութագրական գործակիցը՝ արտահայտված «w = ... պտույտ/կմ-ով» կամ «w = ... իմպուլս/կմ-ով»,
- անվադողերի արդյունավետ շրջանագծի երկարությունը՝ արտահայտված «1 = ... մմ-ով»,
- փոխադրամիջոցի բնութագրման գործակցի որոշման ամսաթվերը եւ անվադողերի արդյունավետ շրջանագծի գնահատված երկարությունը:

4. Կապարակնքումը

Պետք է կապարակնքվեն սարքավորման հետեւյալ մասերը.

ա) տեղադրման մասին ցուցանակը, եթե այն տեղադրված չէ այնպես, որ հնարավոր չլինի այն տեղաշարժել՝ առանց վնասելու դրա վրա կատարված նշագրումները,

բ) ձայնագրող սարքավորման եւ փոխադրամիջոցի միջեւ կապերի երկու ծայրերը,

գ) համակցող սարքը եւ դրա՝ շղթայի մեջ մտնելու կետը,

դ) հետեւի կամրջակի երկու կամ ավելի փոխանցման գործակից ունեցող փոխադրամիջոցի փոխարկման մեխանիզմը,

ե) համակցող սարքը եւ փոխարկման մեխանիզմը սարքավորման մնացած մասերին միացնող կապակցող սարքեր,

զ) III գլուխ (ա) 7.2-ի համաձայն պահանջվող փաթեթավորումները:

Առանձին դեպքերում սարքավորման տեսակի հաստատման վրա կարող են պահանջվել հավելյալ կապարակնիքներ, եւ այդ կապարակնիքները դնելու մասին պետք է նշում կատարվի հաստատման հավաստագրում:

Արտակարգ իրավիճակներում կարող են հեռացվել միայն «բ», «գ» եւ «ե» կետերում նշված կապարակնիքները. յուրաքանչյուր անգամ, երբ հեռացվում են այդ կապարակնիքները, պետք է կազմվի եւ լիազորված մարմին ներկայացվի նման գործողության իրականացման հիմքերը նշող գրավոր հաշվետվություն:

VI. ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԶՆՆՈՒՄՆԵՐ

Անդամ պետությունները նշանակում են այն մարմիններին, որոնք իրականացնում են ստուգումները եւ զննումները:

1. Նոր կամ վերանորոգված սարքերի հավաստում

Յուրաքանչյուր առանձին սարք, լինի այն նոր կամ վերանորոգված, դրա ճշգրիտ աշխատանքի եւ ցուցմունքների ու գրանցումների ճշգրտության առումով, պետք է հավաստման ենթարկվի III գլխի (զ) 1 կետով սահմանված սահմանափակումների շրջանակներում՝ կապարակնիքվելով V գլխի (4) (զ) կետի համաձայն:

Անդամ պետություններն այս նպատակով կարող են սահմանել նախնական ստուգում, որը բաղկացած է նոր կամ վերանորոգված սարքի ստուգումից եւ տեսակի հաստատված նմուշի հետ եւ (կամ) Կանոնակարգի եւ դրա հավելվածների հետ դրա համապատասխանության հաստատումից, կամ կարող են հավաստման իրավունքը փոխանցել արտադրողներին կամ նրանց լիազորված գործակալներին:

2. Տեղադրում

Փոխադրամիջոցի մեջ տեղադրվելու ժամանակ ձայնագրող սարքավորումը եւ տեղադրումն ամբողջությամբ պետք է համապատասխանի III գլուխ (զ) 2-ում սահմանված՝ առավելագույն թույլատրելի շեղումների հետ կապված դրույթներին:

Ընդունման փորձարկումներն իրականացվում են հաստատված տեղադրող մասնագետի կամ արհեստանոցի կողմից՝ նրանց պատասխանատվությամբ:

3. Պարբերաբար կատարվող զննումներ

ա) Փոխադրամիջոցի մեջ տեղադրված սարքավորման պարբերաբար կատարվող զննումները կատարվում են առնվազն յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ եւ կարող են իրականացվել փոխադրամիջոցների՝ ավտոճանապարհային շահագործման պիտանիության փորձարկումների հետ միասին:

Այս զննումները ներառում են հետեւյալ ստուգումները՝ ապահովելու.

որ սարքավորումը ճշգրտորեն է աշխատում,

– որ սարքավորման վրա առկա է տեսակի հաստատման նշան, – որ տեղադրման մասին ցուցանակն ամրացված է,

– որ սարքավորման եւ տեղադրման մյուս մասերի վրա կապարակնիքներն անվնաս են,

– անվադողերի իրական շրջանագծի երկարությունը:

բ) օգտագործման ընթացքում առավելագույն թույլատրելի շեղումների մասին III գլխի (գ) 3–ում նշված դրույթի հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով կատարվում է զննում առնվազն յուրաքանչյուր վեց տարին մեկ անգամ՝ չնայած այն հանգամանքին, որ յուրաքանչյուր անդամ պետություն կարող է իր տարածքում գրանցված փոխադրամիջոցների նման զննման համար սահմանել ավելի կարճ ժամանակահատված: Նման զննումները պետք է տեղադրման մասին ցուցանակի փոխարինման գործողություն ընդգրկեն:

4. Սխալանքների չափում

Տեղադրման ժամանակ եւ օգտագործման ընթացքում սխալանքների չափումն իրականացվում է հետեւյալ պայմաններով, որոնք պետք է համարվեն փորձարկման ստանդարտ պայմանների մի մաս.

– փոխադրամիջոցը բեռնավորված չէ, գտնվում է նորմալ աշխատանքային վիճակում,

– ճնշումը դողերում համապատասխանում է արտադրողի ցուցումներին,

– դողերի մաշվածքը օրենքով թույլատրելի սահմաններում է,

– փոխադրամիջոցի տեղաշարժը.

փոխադրամիջոցը պետք է տեղաշարժվի, ընթանա իր շարժիչի օգնությամբ, ուղիղ գծով եւ հարթ մակերեւույթով՝ ± 50.5 կմ/ժ արագությամբ՝ պայմանով, որ փորձարկումը լինի համեմատական ճշգրտության, այն կարելի է իրականացնել նաեւ համապատասխան փորձարկման վայրում:

ՀԱՎԵԼՎԱԾ //

ՀԱՍՏԱՏՄԱՆ ՆՇԱՆ ԵՎ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

I. ՀԱՍՏԱՏՄԱՆ ՆՇԱՆ

1. Հաստատման նշանը բաղկացած է՝

– ուղղանկյունից, որի մեջ նշված է «e» տառը, որին հաջորդում է հաստատումը տրամադրած երկրի տարբերակող համարը կամ տառը՝ համաձայն հետեւյալ պայմանական նշանների.

1.2 // Բելգիա // 6, // Դանիա // 18, // Գերմանիա // 1, // Հունաստան // GR, // Իսպանիա // 9, // Ֆրանսիա // 2, // Իռլանդիա // IRL, // Իտալիա // 3, // Լյուքսեմբուրգ // 13, // Նիդեռլանդներ // 4, // Պորտուգալիա // 21, // Միացյալ Թագավորություն // 11

եւ

– ձայնագրող սարքավորման կամ գրանցման թերթիկի նախատիպի համար մշակված հաստատման հավաստագրի համարին համապատասխանող հաստատման համարը տեղադրվում է այս ուղղանկյան հարակից տարածքի որեւէ մասում:

2. Հաստատման նշանը պետք է երեւա սարքավորումների յուրաքանչյուր կոմպլեկտի նկարագրական ցուցանակի եւ յուրաքանչյուր գրանցման թերթիկի վրա: Այն պետք է լինի անջնջելի եւ միշտ հստակորեն ընթեռնելի մնա :

3. Ստորեւ նշված հաստատման նշանի չափսերն արտահայտված են միլիմետրերով, եւ այս չափսերը նվազագույնն են: Այս չափսերի միջեւ պետք է պահպանվի հարաբերակցությունը:

(1) Այս թվերը ներկայացված են միայն որպես ուղղորդում:

II. ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

Հաստատում շնորհած պետությունը դիմողին տրամադրում է հաստատման հավաստագիր, որի նմուշը ներկայացված է ստորեւ: Երբ մյուս անդամ պետությունները տեղեկացվում են տրամադրված հաստատումների կամ, որոշ դեպքերում, դրանց մերժման մասին, անդամ պետությունն օգտագործում է այդ հավաստագրի պատճենները:

ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

Իրավասու մարմնի անվանումը

Ծանուցում (1)՝

- ձայնագրող սարքավորման տեսակի հաստատման,
- ձայնագրող սարքավորման տեսակի հաստատումը հետ վերցնելու,
- գրանցման թերթիկի նմուշի հաստատման,
- գրանցման թերթիկի նմուշի հաստատումը հետ վերցնելու մասին:

Հաստատում թիվ

1. Առետրային նշանը կամ անվանումը
 2. Տեսակի կամ նմուշի անվանումը
 3. Արտադրողի անվանումը
 4. Արտադրողի հասցեն
 5. Ներկայացվել է հաստատման [ամսաթիվը]
 6. Փորձարկվել է [վայրը]
 7. Փորձարկման ակտի ամսաթիվը եւ համարը
 8. Հաստատման ամսաթիվը
 9. Հաստատումը հետ վերցնելու ամսաթիվը
 10. Ձայնագրող սարքավորման այն տեսակը կամ տեսակները, որոնց վրա նախատեսվում է օգտագործել թերթիկը
 11. Վայրը
 12. Ամսաթիվը
 13. Կցված նկարագրական փաստաթղթեր
 14. Նշումներ
- (Ստորագրություն)

1) Ջնջեք այն կետերը, որոնք կիրառելի չեն: